ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2025 թվականի N 100-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ՝ ԱՃՈՒՐԴԱՎԱՐ ՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի N 110-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, 36-րդ հոդվածի 7-րդ մասով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի և հողամասերի ժամանակավոր օգտագործման նպատակով վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքի տրամադրման համար ստեղծել մրցութային հանձնաժողով՝ հետևյալ անհատական կազմով.

1) Ավետիս Առաքելյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,
2) Հենրիկ Գասպարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետ,
3) Կարեն Մխիթարյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի (այսուհետ՝ բաժին) ժամանակավոր պաշտոնակատար,
4) Հրաչիկ Վարդանյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի պարտականությունները կատարող,
5) Էդգար Բաղդասարյան – Գյումրի համայնքի ավագանու անդամ,
6) Լիզա Գասպարյան – Գյումրի համայնքի ավագանու անդամ,
7) Լուսինե Անանյան - Գյումրի համայնքի ավագանու անդամ,
8) Աննա Մուրադյան - Գյումրի համայնքի ավագանու անդամ,
9) Սիրվարդ Բասենցյան – բաժնի գործակալ:

2. Նշանակել՝

1) աճուրդավար՝ Ավետիս Առաքելյանին,
2) արձանագրող՝ Սիրվարդ Բասենցյանին:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության և Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու, անհատական կազմը հաստատելու և աճուրդավար ու արձանագրող նշանակելու մասին» N 110-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 1-ին կետով ստեղծված մրցութային հանձնաժողովի անդամներին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -23 **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Կ.ՄԱԼԽԱՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 16
ք. Գյումրի